Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակաձևերի դասավանդումը կարճ պատմվածքների միջոցով

Ուսուցիչ՝ Մարիամ Թամազյան

Դպրոց՝ *Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց*

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...3
ԳԼՈՒԽ 1.ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ……6
1.1 Քերականության ուսուցման ժամանակակից հաղորդակցական ուղղվածության մոտեցումը……6
1.2. Պատմվածքների դերն անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում……8
ԳԼՈՒԽ2.ԿԱՐՃ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՆԵՐԿԱ ԱՆՈՐՈՇ ԵՎ ՆԵՐԿԱ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՁԵՎԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ……12
2.1. Աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը անգլերենի ուսուցման գործընթացում……12
2.2. Անգլերենի ներկա անորոշ ժամանակաձևի ուսուցումը կարճ պատմվածքների միջոցով……14
2.3. Անգլերենի ներկա շարունակական ժամանակաձևի ուսուցումը կարճ պատմվածքների միջոցով……17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……23
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում գոյատևելու համար մարդկանց հարկավոր է բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ,անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ,որոնք ոչ միայն ցանկալի և հետաքրիր լինեն աշակերտների համար,այլև ունենան ուսուցողական,ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթան հանդիսանան աշակերտների ստեղծագործական միտքը զարգացնելու գործում:

Այդպիսի հնար են կարճ պատմվածքները, որոնք հոգեհարազատ և սիրված են երեխաների կողմից: Ինչպես նշվեց վերևում,կարճ պատմվածքները ունեն նաև դաստիարակչական,ուսուցողական նշանակություն:Այս դեպքում դրանք հանդես են գալիս որպես միջոց գիտելիքը տեղ հասցնելու համար: Կարճ պատմվածքները լայն տարածում ունեն դաստիարակության և ուսուցման գործընթացում:

Դպրոցում, ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողութ - յունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Ճանաչողական հետաքրքրությունների համար խթան կարող են դառնալ ուսուցումը հետաքրքիր դարձնելու հնարներն ու ձևերը,ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը:Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է գտնել ուսուցման համար այնպիսի տարբերակներ,որոնք ոչ միայն ցանկալի լինեն երեխաների համար,այլ նրանց մոտ առաջացնեն մոտիվացիա և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը: Պատմվածքը շատ հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Պատմվածքները փոքրիկների կողմից ճանաչվում են որպես գործունեության հիմնական ձև,հատկապես,երբ լուծվում են կրտսեր դպրոցականների ուսումնական խնդիրները: Լուծելիս կիրառվում են տարբեր մանկավարժական մեթոդներ լեզվական նյութը, ներառյալ՝ քերականությունը, ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելու համար:

Աշխատանքի *արդիականությունը պայմանավորված է* այն հանգամանքով, որ արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի

կարևորագույն խնդիրներից են դառնում ուսուցումը հետաքրքրիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը,ինչպես նաև բարդ,բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ,որոնք ոչ միայն ցանկալի և հետաքրիր լինի երեխաների համար,այլև ունենա ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժանամակ խթան հանդիսանա աշակերտների ստեղծագործական միտքը զարգացնելու գործում: Ավելին՝ քերականության ուսուցման հաղորդակցական մոտեցումը նախատեսում է քերականական նյութի ոչ թե մեկուսացած մատուցում, այլև քերականության հաղորդակցական համատեքստում ներկայացում՝ հաշվի առնելով նաև օտար լեզուների ուսուցման ժամանակակից հաղորդակցական ուղղվածությունը: Այդ առումով պատմվածքների կիրառումը հիանալի միջոց կարող է հանդիսանալ այդ նպատակներին հասնելու գործընթացում: Ինչ վերաբերում է անգլերեն ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակաձևերին, ապա դրանք լրացուցիչ բարդություն են ներկայացնում հայ աշակերտների համար՝ պայմանավորված նրանց մայրենի լեզվում այդ 2 ժամանակաձևերի փոխարեն ընդամենը 1 ժամանակաձևի առկայությամբ: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում անգլերենի՝ որպես օտար լեզվի դասերի ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել այդ 2 ժամանակաձևերի տարբերությանը՝ համատեղելով տարբերությունների ընդգծումը հաղորդակցական համատեքստում քերականության դասավանդման մոտեցումների հետ:

Հետազոտական աշխատանքի *նպատակն է* ուսումնասիրել ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակաձևերի դասավանդման հնարավորությունները կարճ պատմվածքների միջոցով:

Բուն նպատակից բխում են հետևյալ խնդիրները ՝

- Ուսումնասիրել պատմվածքների դերը
- Բացահայտել աշակերտների ստեղծագործական կողմերը

- Առաջարկել սովորողներին անգլերեն բանավոր խոսքի զարգացման արդյունավետ ուղիներ՝ներառելով ստեղծական առաջադրանքներ
- Կազմել սովորողների խոսքը զարգացնող ստեղծագործական առաջադրանքների փաթեթ
- Փորձարկել մեր կողմից ստեղծագործական առաջադրանքներից մի քանիսը դասապրոցեսում:

Աշխատանքը կազմված է ներածությունից, 2 գլուխներից, 5ենթագլուխներից,եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. Քերականության ուսուցման ժամանակակից հաղորդակցական ուղղվածության մոտեցումը

Բանավոր և գրավոր հաղորդակցության գործընթացում մարդիկ օգտագործում են լեզվի միջոցները, դրա բառապաշարը և քերականությունը՝ կառուցելու համար արտահայտություններ, որոնք հասկանալի կլինեն հասցեատիրոջը: Այնուամենայնիվ, միայն բառապաշարի և քերականության իմացությունը բավարար չէ տվյալ լեզվով հաղորդակցությունը արդյունավետ կիրառելու համար:

Հաշվի առնելով օտար լեզվի դասավանդման գործնական նպատակը՝ սովորողներին նախապատրաստելը օտար լեզվով իրական հաղորդակցության, առաջատար մեթոդաբանական սկզբունքը պետք է անվանել հաղորդակցական կողմնորոշման կամ ուղղվածության սկզբունք: Սա նշանակում է, որ ուսուցումը պետք է կառուցված լինի այնպես, որ սովորողները ներգրավվեն բանավոր (ունկնդրելու, խոսելու) և գրավոր (ընթերցելու, գրելու) հաղորդակցության մեջ:

Այսպիսով՝ օտար լեզվի ուսուցումը միայն քերականական գիտելիքների հաղորդում չէ: Ներկայումս յուրաքանչյուր սովորող հետաքրքրված է օտար լեզվի պրակտիկ իմացությամբ: Հաղորդակցվելու ընթացքում սովորողը պետք է հնարավորություն ունենա ազատ արտահայտել իր մտքերն ու զգացմունքները, չվախենա քննադատվելու կամ սխալվելու վտանգից, լինի բոլորի ուշադրության կենտրոնում: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող սովորողները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի դաս վարող ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող:

Քերականության տիրապետումը խոսքային գործունեության բոլոր տեսակների բաղկացուցիչ մասն է, որի ձևավորումը, կատարելագործումը և զարգացումը օտար

լեզուների ուսուցման հիմնական խնդիրն է: Քերականության մեթոդական համակարգի մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ այն սպասարկում է խոսքային գործունեության տարբեր տեսակների, որոնք կազմում են ուսուցման նպատակ:

Այսպիսով կարելի է ասել, որ քերականական նյութի ներմուծման հաղորդակցական ուղղվածությամբ ուսուցումը կարող է խթանել սովորողների հետաքրքրությունն առարկայի նկատմամբ և բարձրացնի ուսուցման մոտիվացիան: Նման դասերի ընթացքում սովորողների մտահորիզոնն ընդլայնվում է, զումարած ուսումնասիրվող լեզվի՝ երկրի մշակույթի, սովորողների սոցիալ-մշակութային կարողությունների զարգացումը:

Քերականական հմտությունների ձևավորումը կատարվում է փուլ առ փուլ: Այս փուլերը նյութի ներմուծման, յուրացման և կիրառման փուլերն են: Ներմուծման փուլում անհրաժեշտ է բացահայտել քերականական կառուցվածքի իմաստը, ձևը և օգտագործումը, ապահովել դրա ընկալումը և ըմբռնումը:

Քերականական երևույթը բացատրելը նշանակում է.

- բացահայտել դրա առանձնահատկությունները
- բացատրել իմաստը
- ցուցադրել կիրառությունը համատեքստում
- իրականացնել առաջնային ամրապնդում:

Քերականական տեքստերը պետք է լինեն ուսուցողական: Երբ օրինակները վերցված են կյանքից, դա շատ ավելի մեծ ազդեցություն կունենա ուսուցման մեջ: Եվ ամենակարևորն այն է, որ դա անհրաժեշտ լինի: Տեղեկատվական համատեքստը պետք է հասկանալի և հեշտ հիշելի լինի: Տարբեր իրավիճակներում տեղեկատվությունը պետք է լինի պարզ, օգտակար և գործնական:

Սովորողները միշտ հետաքրքրվում են իրական տեքստերով: Նրանք ոգևորվում են, ցանկանում են սովորել, խաղալ դերեր և հաճախել դասին: Նրանք պատրաստ են առանց երկմտելու մասնակցել ցանկացած գործողության:

Քերականությունը հաճախ դասավանդվում է ավանդական մեթոդների կիրառմամբ: Շատ ժամանակ քերականության դասերը սովորողներին բարդ են թվում: Այդ պատճառով առկա նյութը պետք է բացատրել այնպես, որ սովորողները կարողանան ընկալել և հեշտ կիրառել քերականությունը: Ուսուցիչների մեծ մասը ուսուցողական նյութը բացատրում են հիմնականում պաստառներով և գրատախտակին, որպեսզի նյութը նաև տեսողական կողմից յուրացվի: Սովորողները ի սկզբանե ծանոթ են լինում քերականական վարժություններին:

Այսպիսով՝ հաղորդակցական քերականությունը ստեղծում է բարենպաստ պայմաններ աշակերտների լեզվական հորիզոնների ընդլայնման, ընդհանուր և հատուկ կրթական հմտությունների, խոսքի, ճանաչողական և ստեղծագործական ունակությունների զարգացման և կատարելագործման համար: Ուսուցման գործընթացում սովորողները զարգացնում են լեզվի և խոսքի խնդիրները լուծելու, քերականական նյութերի ուսումնասիրման հետ կապված դժվարությունները հաղթահարելու իրենց կարողությունները: Այս համատեքստում ուսուցչի կողմից կարող են կիրառվել պատվածքները՝ որպես քերականական նյութը հաղորդակցական համատեքստում մատուցելու եղանակ:

1 2. Պատմվածքների դերն անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում

Շատ մանկավարժներ ուսուցման գործընթացում բախվում են հետևյալ խնդիրներին. «Ինչ սովորեցնել» և «Ինչպես սովորեցնել»: Առաջինը վերաբերում է կրթության բովանդակությանը, երկրորդը՝ ուսուցման մեթոդին:

Կան բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրներ:Խոսենք դրանցից մի քանիսի մասին:Դրանցից առաջինը ուսուցման՝դաստիարակության վրա ունեցած ներգործությունն է: Այս խնդիրը լուծելու համար պահանջվում է ուժեղացնել սովորողների գաղափարական դաստիարակությունը և այդ հիմքի վրա ձևավորել նրանց գիտական աշխարհայացքը: Այնուհետև՝ նշված խնդրի լուծումը պահանջում է

բարեփոխել կրթության բավանդակությունը:Դրան կարող են օգնել ուսումնական առարկաները:

Երկրորդ կարևոր խնդիրը սովորողների մտածողության և ճանաչողական որակների զարգացումն է, առանց որի անհնարին է զարգացնել անձի ստեղծաագործական որակները: Այդ նպատակով սովորողի մեջ պետք է դաստիարակել մտածական գործունեության յուրահատկությունները, հայտնագործություն կատարելու ունակություն, որոնողական գործունեություն, երևույթների՝ առարկաների մեջ գլխավորը տեսնելու կարողություն, դժվարության գիտակցում, դժվարին իրավիճակները հաղթահարելու պատրաստակամություն և այլն:

Կրտսեր դպրոցական տարիքը երեխայի անհատականության զարգացման եզակի շրջան է, քանի որ այդ ընթացքում ձևավորվում են աշակերտների պատկերացումները շրջապատող աշխարհի մասին, տեղի է ունենում նրա ֆիզիկական և մտավոր ինտենսիվ զարգացումը: Զարգացման ասպեկտներից մեկը նրա ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումն է: Պատմվածքը հնարավորություն է տալիս հետաքրքրել երեխային, ներգրավել նրան ուսումնական գործընթացում, ուշադրություն հրավիրել այն առարկաների վրա, որոնք նորմալ պայմաններում երեխային չեն հետաքրքրում, և որոնց վրա դժվար է կենտրոնացնել կրտսեր աշակերտների ուշադրությունը : (Бондаренко)

Ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակաձևերի դասավանդումը կարճ պատմվածքների միջոցով ենթադրում է օտար լեզվի ուսուցման գործընթացում կիրառել ստեղծագործական կարողությունները զարգացնող մեթոդներ:

Այսօր օտար լեզվի ուսուցման մեջ ուշադրության կենտրոնում են երեխայի անհատականությունն ու ներաշխարհը: Ահա թե ինչու օտար լեզու դասավանդող ուսուցչի խնդիրը կայանում է ուսումնական գործընթացի ձևի և մեթոդների ճիշտ

ընտրությանը մեջ, որոնք օպտիմալ կերպով կզարգացնեն յուրաքանչյուր սովորողի անհատականությունը: Ուսուցիչը պարտավոր է ակտիվացնել յուրաքանչյուր սովորողի ենթագիտակցական գործունեությունը, ստեղծելու պայմաններ տիրապետելու պրակտիկ անգլերենին, ընտրելու ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր աշակերտի ցուցադրելու իր ակտիվությունն ու ստեղծարարությունը: Իսկ ի՞նչ է նշանակում ստեղծարարություն: Creative անգլերենից թարգմանաբար նշանակում է ստեղծարար, ստեղծագործ, տարբերվող նորի ստեղծումով և փնտրումով: Այս ամենից ելնելով՝ նպատակ է դրվել ստեղծելու ստեղծարար իրավիճակներ սովորողների ներքին մոտիվացիայի և ճանաչողական հմտությունների զագացման համար՝ ապահովելով դասավանդվող նյութի լիարժեք յուրացում:Ուսուցիչները սովորաբար ստեղծում են միջավայր սովորելու համար: Դրա համար պետք է ունենան լավ ռազմավարությունների ցանկ, ստեղծեն կանոններ, կազմակերպեն սովորողների խմբային աշխատանքը, մշտադիտարկեն դասարանի ակտիվությունը, ապահովեն կարգապահություն՝ կանխելով անցանկալի վարքի դրսևորումները:

Աշակերտները կարող են ոչ միայն գրել իրենց հեքիաթները, այլև հանդես գալ արդեն իսկ գոյություն ունեցող հայտնի ստեղծագործությունների վերաբերյալ իրենց սյուժեներով:

Բանավեճերը մեծապես նպաստում են դատողական և գնահատող խոսք կառուցելու կարողության զարգացմանը: Եվ դա բնական է: Բանավեճեր, քննարկումներ մենք շատ ենք կազմակերպում հատկապես 7-րդ դասարանում: Այն իրականացնում ենք հետևյալ քայլերով. ներկայացնել բանավեճի թեման և դրա հետ առնչվող հրավիրված մարդկանց հստակեցնել բանավեճի սահմանները, ոլորտներն ու ուղղությունները ներկայացնել կանոնակարգը փոքրածավալ խոսքով հաղորդել այն ներածական տեղեկատվությունը, որը կօգնի մասնակիցներին, նրանց կմղի խոսակցության, այսինքն՝ կխթանի բանավեճի ընթացքի անկեղծությունը: Բանավեճից առաջ դասարանը մշակում է կանոններ: Այն մոտավորապես այսպիսին

է. - չշեղվել թեմայից - պահպանել սահմանված ժամակակարգը - հարգել միմյանց կարծիքը - մասնակիցների համար ստեղծել հավասար պայմաններ - ուշադիր լսել և մասնակցել քննարկումներին - լինել հանդուրժող այլոց կարծիքների նկատմամբ,որպես խոսքը հարստացնելու զգացմունքային հնարներ հանդես են գալիս բանաստեղծությունը, երգ-երաժշտությունը, դիտումները, հանդիպումները, ցերեկույթները, էքսկուրսիաները և այլն:

Սա պարզ ներկա ժամանակ է, որը նշանակում է գործողություն բառի ամենալայն իմաստով: Գործողությունները նկարագրելու անգլերենի ամենատարածված և ամենապարզ ձևերից մեկը:

Գործողությունները կարող են կապված լինել սովորությունների, հոբբիների, ամենօրյա իրադարձության հետ, ինչպիսին է առավոտյան արթնանալը կամ ինչ-որ բան, որը պարբերաբար տեղի է ունենում:

Այսպիսով՝ հաշվի առնելով օտար լեզուների ուսուցման ժամանակակից հաղորդակցական ուղղվածությունը, պատմվածքների կիրառումը կնպաստի սովորողների կողմից քերականական նյութի առավել դյուրին և լավ յուրացմանը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՐՃ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՆԵՐԿԱ ԱՆՈՐՈՇ ԵՎ ՆԵՐԿԱ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՁԵՎԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը անգլերենի ուսուցման գործընթացում

Մոտիվացիայի մասին մանկավարժական գրականությունում նշված է, որ հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է գրավում: Այս մեթոդը կիրառվում է սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ինձ մոտ հարց առաջացավ, թե ինչ տարբերություն կարող է ունենալ հարցերի միջոցով մոտիվացիայի ձևավորումը, պատմելու միջոցով մոտիվացիայի ձևավորումից: Ինչպես կարող է հարցերի միջոցով մոտիվացիայի ձևավորումը ազդել ուսուցման որակի բարելավման վրա, ուսուցանվող նյութի ավելի խորը մտապահման և հետագայում վերարտադրման համար:

«Ամեն աշակերտ իրեն հավատացող ուսուցչի կարիք ունի….» Անշուշտ, լավ ուսուցչի նպատակը աշակերտի հաջողությունն է: Սրան հասնելու համար տարբեր մեթոդներ են կիրառվում, սակայն ոչ միշտ է նպատակն իրականանում: Այդ դեպքերում հաճախ ուսուցիչներն արդյունքի բացակայության տարբեր պատճառներ են նշում՝ աշակերտի մոտիվացիա, ընդունակություն, երբեմն՝ ժառանգականություն, եթե ստացվել է այնպես, որ նույն ուսուցիչը դասավանդել է նաև տվյալ աշակերտի քույրերին, եղբայրներին, ծնողներին, և այլն:

Այս բացատրությունները երբեմն անբուժելի հիվանդության ախտորոշման են նմանվում, սակայն մինչ «ախտորոշելը», պետք է մտածենք. արդյոք ամեն բան փորձե՞լ ենք և արդյոք ճի՞շտ փորձ ենք արել: Օրինակ, անմեղ թվացող

մեկնաբանությունը ուսուցչի կողմից կարող է ամբողջովին դեմոտիվացնել աշակերտին, իսկ մտածված, աշակերտի յուրահատկությունները և հոգեվիճակը, հաշվի առած մեկ բառն անգամ կարող է ոգևորել:

Դասավանդման ոչ ցանկալի արդյունքներ ունենալու պատճառները կարող են տարբեր լինել, բայց կան բաղադրիչներ, որոնք առանցքային են հաջողության համար:

Կենտրոնանալ աշակերտի ուսումնառության վրա: Յուրաքանչյուր լավ ուսուցիչ ձգտում է լավ դասավանդել՝ հետաքրքիր մեթոդներ կիրառել, զանազանություն մտցնել դասապրոցեսում, ընկերանալ աշակերտի հետ և այլն: Սա շատ լավ է, եթե հաշվի չառնենք այն, որ հաճախ այս քայլերն իրականում ինքնանպատակ են: Այդքան չարչարվելուց հետո, հերթական ստուգման կամ թեստի ժամանակ պարզվում է, որ աշակերտը կարծես բան էլ չի սովորել: Ինչո՞ւ:

Այս դեպքերում ուսուցչի բնական արձագանքը սովորաբար հետևյալն է՝. «սա արեցի, այսքան անգամ կրկնեցի, բացատրեցի....»: Ստացվում է, որ կենտրոնանում ենք մեզ վրա, չհարցնելով՝ իսկ ի՞նչ էր անում աշակերտը, ինչպիսի՞ մտածական գործընթացում էր նա, ի՞նչ էր զգում, ի՞նչն էր նրա մոտ ստացվում և ինչը՝ ոչ: Այս ամենը շատ հաճախ իրականում դուրս է մնում ուսուցչի դիտակետից, այնինչ հենց սա է աշակերտի հաջողության ելակետը: Աշակերտի սովորելու գործընթացը դիտարկելը առաջին հերթին օգնում է ուսուցչին՝ գտնել պատասխաններ շատ հեշտ թվացող, բայց մեծ ծավալի ինքնավերլուծություն պահանջող հարցերին. ի՞նչն է խնդիրը, ինչպե՞ս լուծել, ի՞նչն ավելի լավ կարելի է անել, ինչպե՞ս անել, ինչո՞ւ, ե՞րբ եւ այլն:Ի վերջո, եթե «երեխան չի կարողանում սովորել մեր դասավանդման միջոցով, միգուցե արժե դասավանդել այնպես, ինչպես երեխան է սովորում»: Կրթության նպատակը սովորելն է, այլ ոչ դասավանդելը:ենց այս մոտեցումն է ընկած ուսուցիչների զարգացման վերջին տարիների բազմաթիվ ծրագերի հիմքում:

Դեռևս վաղ մանկության տարիներին երեխայի մեջ ծագում է հաղորդակցման պահանջմունք, որը տարիների ընթացքում աստիճանաբար ընդլայնվում է: Հետագայում այդ պահանջմունքների բավարարման համար մարդը

կատարելագործում է իր խոսքը, ձգտում է տիրապետել լեզվի գանձերին: Մարդու խոսքը զարգանում է աստիճանաբար՝ անցնելով մի շարք փուլեր: Խոսքը դրսևորվում է երկու ձևով՝ բանավոր և գրավոր, որոնք սերտորեն պայմանավորված են միմյանցով, բայց 2-րդը հետևում է առաջինին: Գրավոր ու բանավոր խոսքի զուգակցումն ուսումնական գործընթացում ուսուցչից պահանջում է մանկավարժական, մասնագիտական հմտություն: Խոսքը կարող է լինել ներքին և արտաքին: Արտաքին խոսքն էլ իր հերթին ունենում է դրսևորման երկու ձև՝ բանավոր և գրավոր: Բանավոր խոսքը մտածողության նյութական թաղանթն է և ծառայում է որպես հաղորդակցման հիմնական միջոց մարդկանց միջև, իսկ գրավոր խոսքը նպաստում է հնչյունային խոսքի վերարտադրմանն ու կայունացմանը: Բանավոր խոսքի արտահայտության ձևերն են՝ զրույցը, բանավեճը, զեկուցումը, դասախոսությունը, ճառը, հայտարարությունը, կոչը, երգը, չափածո և արձակ խոսքը:

Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական-արտասանական իրացում: Պայմանավորված է խոսքային իրադրությամբ, հաղորդակցվողների փոխհարաբերությամբ, խոսողի հոգեվիճակով և այլն: Կարևոր են նաև ուղեկցող միջոցները (միմիկա, շարժուձև և այլն): Հիմնականում բարձրաձայն խոսողություն է, կարող է ձայնագրվել, վերարտադրվել, հաղորդվել տեխնիկական միջոցներով (ռադիո, հեռուստատեսություն, հեռախոս): Արտահայտության ձևերն են՝ զրույցը, բանավեճը, դասախոսությունը, ճառը, կոչը, հայտարարությունը, երգը, չափածո և արձակ խոսքը և այլն: Բանավոր խոսքը սահմանափակված է տարածականորեն (չհաշված տեխնիկական միջոցների գործադրումը) և ժամանակով (բանավոր միմյանց հետ կարող են հաղորդակցվել միայն ժամանակակիցները):

Արտաքին խոսքը սովորական հնչյունական-արտասանական իրացում ունեցող խոսքն է: Ներքին խոսքը մենախոսության այն տեսակն է, երբ խոսքը հնչյունական-արտասանական դրսևորում չունի, ուղղված չէ ինչ-որ մեկին, և եթե խոսակից էլ կա, ապա այն երևակայական է: Գիտական, ուսուցողական և այլ

շարադրանքները հենվում են հենց ներքին խոսքի վրա։ Միայն բեմական խոսքում այն կարող է ներկայացվել բարձրաձայն արտասանությամբ։

Ընթերցանությունը խոսողության այն ձևն է, երբ մեկը բարձրաձայն կամ մտքում վերարտադրում, արտաբերում է իր կամ ուրիշի գրավոր խոսքը։

Ուսումնասիրելով ստեղծագործական աշխատանքի առավելությունները՝ պարզվել է, որ այն աշակերտները, ովքեր զբաղվում են ստեղծագործական աշխատանքով, բարելավում են իրենց առաջադիմությունը տարբեր առարկաներում։ Ապացուցվել է, որ շատ հաճախ մաթեմատիկական և լեզվական առարկաները բարելավվում են ստեղծագործական աշխատանքի շնորհիվ։

Գրելը զարգացնում է ստեղծագործական մտածողությունը և օգնում է խնդիրների լուծման հարցում։ Այլ կերպ ասած, այն աշակերտները, ովքեր պարբերաբար գրում են, որպես կանոն դառնում են վերլուծական մտածողներ, այսինքն՝ զարգանում է նրանց մտածելու ունակությունը։ Այս հմտությունը դյուրացնում է ցանկացած առարկայի ուսումնասիրությունը։

Ստեղծագործական առաջադրանքները մեծ ազդեցություն են թողնում աշակերտի ընդհանուր զարգացման գործընթացի վրա, և բացի այդ, դրանք հետաքրքիր և զվարճալի են աշակերտների համար։ Այն աշակերտները, ովքեր կառուցում են իրենց բառապաշարը ստեղծագործական աշխատանքի միջոցով, հետագայում կարողանում են խոսել շատ ճիշտ լեզվով։

Ստեղծագործական աշխատանքին տիրապետելու առավելություններից մեկը այն է, որ աշակերտները սովորում են մեկնաբանել, վերլուծել իրենց ընկերների աշխատանքները, լսել և ընդունել մյուսի քննադատությունները և կատարում են ամեն ինչ, որպեսզի բարելավեն իրենց լեզվական ունակությունները։ Աշակերտները հնարավորություն ունեն գրել, խմբագրել և վերանայել իրենց աշխատանքերը, երբ հանձնարարված է գրել ստեղծագործական շարադրություններ, ազդեցիկ և տպավորիչ գովազդներ, պատմվածքներ և այլն։ Աշակերտներին հնարավորություն է ընձեռվում աշխատել առանձին, ինչպես նաև խմբերով։

2.2. Անգլերենի ներկա անորոշ ժամանակաձևի ուսուցումը կարճ պատմվածքների միջոցով

Ինչպես նշվեց, անգլերենում՝ ի տարբերություն հայերենի գոյություն ունեն ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակաձևերը, որոնք հատուկ դժվարություն են ներկայացնում հայ աշակերտների համար՝ հաճախ հանգեցնելով նաև բացասական փոխներթափանցման:

Ինչպե՞ս է ձևավորվում Present Simple-ը:

Ավելի հեշտ բան չկա, քան բայը Present Simple ձևով դնելը: Դա անելու համար անհրաժեշտ է հեռացնել «to» մասնիկը ինֆիցիտի բայից և դնել բայը առարկայից հետո: Սա Present Simple-ի հիմնական կանոնն է:

They usually play tennis every weekend Նրանք սովորաբար թենիս են խաղում ամեն շաբաթ-կիրակի:

She brings me coffee every morning- Նա ինձ ամեն առավոտ սուրճ է բերում:

It snows in winter-Ձմռանը ձյուն է գալիս

I don't go to school every day

Առաջին քայլով աշակերտների գիտելիքները ուսումնասիրենք ներկա անորոշ ժամանակաձևի վերաբերյալ այնուհետև անցնենք մեթոդիկային այնպես անենք,որ աշակերտներին հետաքրքրի ուսուցողական մասը,մոտիվացիայի աղբյուր ընտրել ենք կարճ պատմվածքները.

1. We use the present simple for talking about permanent states or situations.

True False

2. We use it for things happening at the moment.

True False

3. We use it for general facts (e.g. scientific facts).

True False

4. We use it for talking about timetables (e.g. bus or lesson timetables).

True False

5. We use it for future plans.

True False

6. We use it for routines (e.g. things we do every day or week).

True False

7. We use it for talking about likes and dislikes.

True False

8. We use it for giving opinions (e.g. with the verbs think / believe).

True False

Այժմ անցնենք պատմվածքներին,կատարենք վարժություններ և վերլուծենք

Patrizia's a pilot

Patrizia's a pilot She flies planes every day But now she's having lunch at home She's on holiday! Her husband Tom's a tailor He makes jackets, shirts and ties But now he's drinking juice with her And eating chicken pies. Normally they go to work And come home late at night But today they're in the garden And they're flying their new kite.

1.Listen to the grammar chant. Circle the correct answer.

a. Patrizia's a . police office / pilot / painter

b. She flies every day. planes / kites / helicopters

c. But now she's having at home. lunch / dinner / breakfast

d. Her husband Tom's a . taxi driver / tailor / teacher

e. He makes , shirts and ties. hats / jeans / jackets

f. But now he's drinking with her. water / milk / juice

g. Normally they go to . school / work / the beach

h. But today they're in the . garden / house / park

2. Fill it in! Write the present simple and present continuous forms of the verbs in the sentences.

a. I watch videos online every day.

b. I a cartoon right now.

c. She to football practice every Saturday.

d. She to the park right now.

e. We a cake for our mum's birthday every year.

f. We breakfast at the moment.

g. What every day?

h. What right now?

3.. Write and draw!What do you do every day? What are you doing now? Draw a picture and write about it!

Այս փոքրիկ տեքստերը կարդալիս,և վարժությունները կատարելիս պետք է հիշենք որ յուրաքանչյուր դաս այնպես պետք է կազմակերպել,որ բոլոր աշակերտները ներգրավված լինեն հարց ու պատասխանի միջոցով, խաղեր կազմակերպել որտեղ կօգտագործենք ներկա անորոշ ժամակաձևը:

23. Անգլերենի ներկա շարունակական ժամանակաձևի ուսուցումը կարճ պատմվածքների միջոցով

Անգլերենի քերականության դժվար յուրացվող բաժիններից է նաև ներկա շարունակական ժամանակաձևը ցույց է տալիս ներկայում, խոսելու պահին կատարվող գործողություն:Հիմնական բանը, որ պետք է իմանանք Present Continuous-ի մասին, այն է, որ ժամանակը ցույց է տալիս գործողության տևողությունը ներկայում: Տևողությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ գործողությունը կարող է տևել կարճ, կամ կարող է տևել երկար ժամանակ: Present Continuous-ն ունի բազմաթիվ գործառույթներ, ուստի այս ժամանակաձեւը կարեւոր տեղ ունի անգլերենի քերականության մեջ:

Մենք խոսում ենք մի գործողության մասին, որը կամաց-կամաց զարգանում կամ փոփոխվում է: Նման գործողություն կարելի է ցույց տալ ստանալ (դառնալ), փոխել, դառնալ, բարձրանալ, ընկնել, աճել, կատարելագործվել (բարելավվել), սկսել, բառերով: Ձեր անգլերենը լավանում է: – Ձեր անգլերենը գնալով լավանում է: (Անգլերենը մեկ գիշերվա ընթացքում չի լավացել, բայց աստիճանաբար այն բարելավվում է) Եղանակը բարելավվում է. - Եղանակը լավանում է: (եղանակը որոշ ժամանակ վատ էր, հիմա լավանում է:

The woolly jumper

KITTY: Gran, what are you doing?

GRAN: I'm knitting a jumper.

KITTY: I'm knitting? Why don't you say 'I knit'? That's the present tense in English.

GRAN: Because there are two present tenses in English and when we're talking about things we're doing right now we use the present continuous. You try. What are you doing now?

KITTY: Well, I'm sitting on the sofa, I'm talking to you and I'm watching you knit.

GRAN: Good!

KITTY: So when do we use the present simple?

GRAN: Well, for things we do every day, every week or every month. Tell me what you do every morning.

KITTY: I wake up, I get dressed, I eat breakfast, I brush my teeth, I feed Hero the hamster and then I go to school. GRAN: Well done! Oh, I remember when I was a girl … Hey, you're not listening!

KITTY: Look, Gran. Hero's playing with your knitting!

GRAN: Oh no! What a mess!

1.Circle true or false for these sentences

a. Gran is knitting a jumper. true false

b. Kitty is sitting on the sofa. true false

c. Kitty is talking to Hero. true false

d. Kitty wakes up every evening. true false

e. Kitty feeds Hero every morning. true false

f. Gran goes to school every day. true false

2. Fill it in!

a. Kitty watches TV every evening.

b. Kitty her homework now.
do

c. Gran a scarf now.
knit

d. Gran dinner every day.
make

e. Kitty and Gran shopping every week.
go

f. Kitty and Gran about English now.
talk

g. Kitty and Max breakfast at eight o'clock every morning.
eat

h. Kitty and Max with Hero now.
play

3.Write and draw!

What do you do every day? What are you doing now? Draw pictures and write sentences

Սկզբում աշակերտները ընթերցեցին կարճ պատմվածքը,որտեղ օգտագործված էին ներկա անորոշ և ներկա շարունական ժամանակաձևերը,այնուհետև կատարեցին բազմաբնույթ ուսուցողական և հետաքրքիր վարժություններ:

Առաջին վարժության ընթացքում ճիշտ է թե սխալ տարբերակների միջոցով տեսանք արդյոք աշակերտները հասկացել են տեքստի իմաստը, երկրորդ վարժությունը պետք է լրացնեին ներկա անորոշ կամ ներկա շարունակական ձևերը,այս վարժությունով էլ պետք էր ստուգել ուսուցողական գիտելիքները,երրորդ վարժությունը աշակերտների ամենասիրելի էր, քանի որ այս շատ կարևոր և հետաքրքիր մեթոդ է ուսումնասիրել ստեղծգործական կողմերը նույնպես,այստեղ հանձնարարված էր նկարել գործողությունները ներկա անորոշ և ներկա շարունականան ժամանակաձևերով:

Read and circle true or false for these sentences.

I like sports. I do judo on Fridays and I play volleyball every weekend. Right now I'm not doing sports, I'm watching a match on TV! My brother doesn't like sports. Every weekend he stays at home and plays computer games. Right now he's sleeping!

a. She likes sports. *true false*

b. She plays volleyball on Mondays. *true false*

c. She's watching a match on TV now. *true false*

d. Her brother likes sports. *true false*

e. He's playing computer games now. *true false*

2. Choose the answer! Read the sentence. Circle the correct answer.

a. I my grandmother every Saturday. do call / call / am calling

b. She a lot in the evenings. is read / is reading / reads

c. They to the teacher right now! don't listen / aren't listening / not listen

d. He the dog at the moment. is walking / walks / walk

e. We up early at the weekend. don't get / don't gets / aren't getting

f. What every weekend? you do / do you do / are you doing

g. What right now? you doing / do you do / are you doing

2. Find the mistake! Find the mistake, underline it and write the correct sentence.

a. We're make a cake for mum's birthday now. _____

b. Every Sunday I'm calling my grandmother._____

c. At the moment my sister doesn't studying English. _____

d. My parents take the dog for a walk right now._____

e. My brother is never eating peanuts because he's allergic. _____

Պետք է նշել, որ եթե աշակերտներն ինքնուրույն գրավոր կատարում են առաջադրանքները, ապա այս արդյունավետ մեթոդը ստիպում է երեխաներին տարբերել ներկա անորոշ ժամանակաձևը ներկա շարունակական ժամանկաձևից ինչը նշանակում է, որ նրանք ավելի գիտակցաբար կհիշեն և կտարբերեն ժամանկաձևերը, թարգմանությունը և պատմվածքի իմաստը: Նման

գործողությունները նպաստում են աշակերտներիմոտ մտածողության, հիշողության և ուշադրության զարգացմանը:

Համակարգված և նպատակաուղղված աշխատանքը տվյալ ուղղությամբ թույլ է տալիս հասնելու դրական արդյունքների: Ժամանակակից ուսուցչի տաղանդը կայանում է նրանում, որ նա կարողանա այնպես հետաքրքրել աշակերտին, որ նա ինքը ցանկանա բացահայտել նորը, լուծել իր առջև դրված խնդիրը, որպեսզի աշակերտն ունենա ինքնավստահություն, ուժ և ստեղծագործելու ցանկություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակաձևերի դասավանդումը կարճ պատմվածքների մեջ» եկանք այն եզրակացության,որ պատմվածքները,ստեղծագործական առաջադրանքները,ընթերցելը,ունկնդրելը,հարցումը,բանավեճը,մոտիվացիան կարևոր գործոն է հանդիսանում անգլերենը որպես օտար լեզու սովորողների համար ուսուցումը բարելավելու համար:

Նախ եկանք այն եզրակացության, որ հաղորդակցական քերականության ուսուցումը ենթադրում է ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության արդյունքում աշակերտների կողմից քերականական կանոնների և նմուշների յուրացում, որը տեղի է ունենում դրանց ոչ մեկուսի, ոչ առանձնացված ներկայացման եղանակով, այլ համատեքստի, արդյունավետ աուտենտիկ և հաղորդակցական առաջադրանքների միջոցով՝ հաշվի առնելով նաև աշակերտների անհատական և տարիքային առանձնահատկու-թյունները, կարիքները, պահանջմունքները, լեզվի տիրապետման մակարդակը, ուսումնառության ձևերը և հետաքրքրությունները:

Այս հետազոտական աշխատանքում մենք խոսեցինք այն մասին, թե ինչպես դասավանդել Present Simple Tense և Present continuous ժամանակաձևերը պատմվածքների մեջ,արդիականությունը,ժամանակի ինչ նշիչներ կան և դիտարկեցինք նախադասությունների օրինակների մեջ, նշեցինք պատվածքի դրական կողմերը, կատարեցինք հետաքրքիի և ուսուցողական վարժություններ, կարդացինք և միառժամանակ լսեցինք պատմվածքները,բացահայտեցինք աշակերտների ստեղծագորցական կողմերը:

Ուսումնասիրելով տարատեսակ խաղերի և ստեղծագործական առաջադրանքների օրինակներ՝ պարզեցինք,որ դրանց կիրառման դեպքում աշակերտները ավելի են ներգրավվում անգլերենի ուսուցման գործընթացում և

հեշտությամբ են յուրացնում լեզվական գիտելիքները,ինչպես նաև ձևավորվում հաղորդակցական կարողություններ։

Հետազոտական նախագծի վրա աշխատանքի, տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.

Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունը, անհատականությունը առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են կարճ պատմվածքների մեջ: Կարճ պատմվածքները երեխայի համար ներքին, կենսաբանական պահանջմունք է: Կարդալով է երեխան ճանաչում երևույթի շատ կողմեր, որոնք ի հայտ են գալիս միայն այդ իրավիճակում: Այս իրողությունն է ընկած մանկավարժության մեթոդաբանության այն ելակետի հիմքում, որով կարևորվում է պատմվածքների դերը ուսուցման մակարդակում:

Ըստ այդ ըմբռնման, հետաքրքիր պատմվածքները մեծացնում են գիտելիքի նկատմամբ եղած գրավչության դաշտը, ընկալման, կլանվածության և սևեռման գործակիցները: Դպրոցում կենդանի մանկավարժական գործընթացում կարճ պատմվածքները չեն կարող ինքնանպատակ լինել: Պատմվածքը պետք է հանդես գան ոչ թե որպես առանձին հնար, այլ միաձույլ լինի ուսուցմանը և ծառայի ուսումնական նպատակին: Հարկավոր է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրների լուծմանը:

Այսպիսով ստացված տվյալների համեմատական վերլուծության արդյունքները ցույց տվեցին,որ դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ, 2013,

2. Սարգսյան Ա, Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր,

3. Абросимов В. Н., Профессиональные качества преподавателя, стандарты и мониторинг в образовании 2001, No 6, 61- 64 с.

4. Маркова А. К., Психология труда учителя, книга для учителя, Москва, Просвещение, 1993, 192 с.

5. Рогов Е. Н. , Учитель как объект психологического исследования, Москва, 1998, 496 с.

6. Сластенин В. А., Формирование личности учителя советской школы в процессе профессиональной подготовки, Москва, 1976, 164 с.

7. Науменко М. В., Исследование профессиональных представлений педагогов с различным уровнем профессиональной компетентности:

8. Овчарова Р. В., Профессиональная компетентность педагога:

9. Светлана В. П., Компетентность учителя:

10. Домнина Н. В., Профессиональная компетентность современного педагога:

11. Անանյան Ա., Գործող ծրագրերով և դասագրքերով անհնար է արդյունավետ ուսուցում կազմակերպել, Մանկավարժություն, թիվ 6, 2010:

12. Գալոյան Ս., Ֆինլանդիայի հանրակրթական համակարգը, Մանկավարժություն, թիվ 3, 2010 :

13. Դպրոցական կրթության հասանելիությունը Հայաստանում, Երևան, 2012 ։